

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԶԵՐՄՕՐԷՆ ՀԻՒՐԸՆԿԱԼՈՒԵՑԱԻ ՔԱՂԱՔԻՍ ՄԵՋ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմական օրերէն վերջ, երէկ իր Աթոռը վերադարձաւ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեան: Ինչպէս հաղորդած էինք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր հետ նոյն օդանաւով քաղաքէն եկաւ նաեւ երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան: Եշիգիւղի Աթաբէրք օդակայանին մէջ, զոյգ պատրիարքները դիմաւորուեցան Պատկառելի Կրօնական Ժողովի Ատենապետ Հոգ. Տ. Արամ Մ. Վրդ. Աթէշեանի, այլ հոգեւորականներու եւ ազգայիններու կողմէ: Պատուոյ սրահին մէջ միջոց մը հանգիստ առնելէ վերջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրերը առաջնորդուեցան Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոց, ուր դիմաւորուեցան Հոգաբարձութեան Ատենապետ Փիլօ Աթանի, Փոխ-Ատենապետ Մելիքն Գարաէօսէի եւ հաստատութեան միւս պատասխանատուներուն կողմէ: Մատրան մէջ կարճ աղօթք մը ընելէ վերջ, Պատրիարք Հայրերը առաջնորդուեցան Հոգաբարձութեան սենեակը, ուր տեղի ունեցաւ զրոյց՝ վերջին իրադարձութիւններուն շուրջ: Ներկայ էին նաեւ Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Թեմերու Առաջնորդ Գերշ. Տ. Տիրայր Ս. Արք. Մարտիրոսեան, Գերշ. Տ. Շահան Ս. Արք. Սվանեան, երուսաղէմի Պատրիարքութեան անդամներէն Գերշ. Տ. Արիս Ս. Եպսկ. Երվանեան, Հոգ. Տ. Արամ Մ. Վրդ. Աթէշեան, երուսաղէմէն Հոգ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան, Հոգ. Տ. Զաֆէոս Աթեղայ Օհանեան եւ այլ ազգայիններ:

Կէսօրին, Պիլէք հանգստարանի

սրահին մէջ Հոգաբարձութիւնը նաշկերոյթ մը սարքեց ի պատիւ երկու Պատրիարքներուն: Հաւաքոյթին ներկայ էին նաեւ կարգ մը մտաւորականներ, որոնք ունեցան ելոյթներ: Հոգաբարձութեան անունով ալ արտայայտուեցաւ Արէտ երկանեան: Սրբազան Հայրերն ալ արտասանեցին իրենց սրտի խօսքերը: Հաւաքոյթը վերջ գտաւ երկու պատրիարքներու ելոյթներով: Այս առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ընչեց, որ երուսաղէմի Պատրիարքը քաղաքի պաշտօնապէս այցելել կը հրաւիրէ յառաջիկայ շրջանին. Թորգոմ Պատրիարքն ալ իր խօսքերուն ընթացքին գնահատեց Իսթանպուլահայութիւնը եւ ընդգծեց, որ մեր համայնքը օրինակ կրնայ ըլլալ ուրիշ գաղութներու:

Հիւանդանոցէն վերջ երկու պատրիարքները անցան Գումգարու, ուր նախ աղօթեցին Ս. Աստուածածին Աթոռանիստ Մայր եկեղեցւոյ մէջ եւ շրջեցան համալիրը: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ապա Պատրիարքարանի իր աշխատասենեակին մէջ հիւրասիրեց երուսաղէմի Թորգոմ Պատրիարքը: Կայացաւ մտերմիկ զրոյց: Թորգոմ Պատրիարք Հայրը շրջեցաւ Պատրիարքարանի դահլիճը եւ հրաժեշտ առնելէ առաջ ստորագրեց պատուոյ տոմարը: Երեկոյեան ժամերուն, երուսաղէմի Պատրիարքը վերադարձաւ իր Աթոռը:

«ԺԱՄԱՆԱԿ» 6 Նոյ. 1999